

Տեխնիկական առաջադրանք

**Տվյալների հանրամատչելիության ապահովման և առցանց
հարթակի (տեղեկատվական պլատֆորմ) ստեղծման համար
տեխնիկական պահանջներ (TOR)**

Բովանդակություն

1. Նախաբան.....	3
1.1 Իրավիճակի նկարագրություն	3
1.2 Առաջադրանքի նպատակը	5
2. Առաջադրանքի նկարագրություն	6
3. Ակնկալվող արդյունքներ	9
4. Աշխատանքների իրականացման ժամանակացույց	9
5. Խորհրդատուների որակավորում.....	11
6. Այլ պայմաններ.....	11
7. Մտավոր սեփականություն	11
8. Պատասխանատվությունը թերությունների համար.....	14
9. Մտավոր սեփականության իրավունքների երաշխիք	16

1. Նախաբան

1.1 Իրավիճակի նկարագրություն

Վերջին տասնհինգ տարիների ընթացքում ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչել և հռչակել է իր գործունեության առանցքային ուղղություններից մեկը:

Դեռևս նախորդ տասնամյակի սկզբներին ՀՀ կառավարությունն ամբողջականացրել է կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմնական շրջանակները: Մասնավորապես, 2003 թ. նոյեմբերի 6-ին ՀՀ կառավարության N 1522-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների 2003-2007 թթ. ծրագիրը, որը սահմանում էր կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը: Նշված ռազմավարությունը միտված էր կոռուպցիայի հաղթահարմանը, այն ծնող և դրա տարածումը խթանող պատճառների ու պայմանների վերացմանը, երկրում բարոյա-հոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը:

ՀՀ-ում հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական իրականացման կարևորագույն նախադրյալներից էր ինստիտուցիոնալ կառույցի ձևավորումը: 2004 թ. հունիսի 1-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, որն ի պաշտոնե գլխավորում էր ՀՀ վարչապետը: Խորհրդին առընթեր ստեղծվել էր Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողով՝ ՀՀ Նախագահի օգնականի ղեկավարությամբ:

2009 թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ կառավարության N 1272-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիրը, որով որպես հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակ և ակնկալվող վերջնական արդյունք է սահմանվել կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումը:

ՀՀ ԱԺ-ի 2014 թվականի մայիսի 22-ի «ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-115-Ն որոշմամբ ևս մեկ անգամ ՀՀ կառավարության գործունեության առանցքային ուղղություններից մեկը սահմանվեց կոռուպցիայի դեմ պայքարը: Մասնավորապես, սահմանվեց, որ ՀՀ կառավարությունը հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացնելու է կոռուպցիայի դեմ պայքարի նոր վերաիմաստավորված տեսլականի հիման վրա: Այդ տեսլականը նախևառաջ միտված է հանրային կառավարման համակարգում բարեխիղճ և պատասխանատու պաշտոնյայի տեսակի ձևավորման միջոցով կոռուպցիայի մակարդակի ու տարածվածության նվազեցմանը, հանրային վստահության բարձրացմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման ավելի արդյունավետ և գործուն միջոցների կիրառմանը:

Կոռուպցիայի դեմ պայքարի գործում էական նշանակություն ունի քաղաքացիական հասարակության ներգրավումը հանրային կառավարման համակարգի գործունեությանը: Պետք է ապահովվի հիմնահարցերի վերհանման, քաղաքականության մշակման, կիրարկման և դրա արդյունքների գնահատման գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը: Վերջին տարիներին քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ունեցել են որոշակի ներգրավվածություն կառավարության կողմից բազմաթիվ քաղաքական ծրագրերի մշակման աշխատանքներին: Հակակոռուպցիոն ռազմավարության երկու փաստաթղթերի մշակումը ևս իրականացվել է հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Այդուհանդերձ, մասնակցային կառավարումը լիարժեք չի եղել. նախ՝ ապահովված չէ հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունը քաղաքական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացի բոլոր փուլերում, երկրորդ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությունը արդյունավետ չի եղել՝ պայմանավորված ինստիտուցիոնալ կարողությունների և ռեսուրսների սահմանափակվածությամբ: Բացի այդ, ձևավորված չէ պետություն-հասարակական կազմակերպություններ ռազմավարական գործընկերության մշակույթը: Վերոշարադրյալ հիմնահարցերը լուծելու համար պետք է ձեռնարկել համալիր և հետևողական մի շարք քայլեր.

Ա. Ապահովել կայուն կապի ձևավորում, շարունակական երկխոսություն քաղաքացիական հասարակության և իշխանության մարմինների ու հանրային ինստիտուտների միջև.

- Բարձրացնել ընթացող բարեփոխումների ու ծրագրերի վերաբերյալ քաղաքացիական հասարակության, գործարար հանրության, քաղաքացիների, ՋԼՄ իրազեկվածության մակարդակը,
- Նպաստել երկխոսության նոր և կայուն հարթակների ձևավորմանը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիաների, ֆորմալ ցանցերի տեսքով,
- Ներդնել հանրային լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կանոնակարգված ձևաչափեր:

Բ. Ապահովել որոշումների կայացման, իրականացման և վերահսկման գործընթացում հանրային մասնակցություն.

- Ներդնել էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) առանձին գործիքներ, այդ թվում՝ էլեկտրոնային սոցիոլոգիական հարցումների, էլեկտրոնային քվեարկությունների, նոր առաջարկությունների հավաքման և այլ մեթոդների կիրառմամբ,

- Քննարկել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին հանրային ինստիտուտների առանձին լիազորությունների պատվիրակման կամ դրանց համատեղ իրականացման հնարավորությունը,
- Ներդնել պետական ծրագրերի իրականացման և հանրային ծառայությունների մատուցման նկատմամբ մշտադիտարկման համակարգ՝ յուրաքանչյուր բնագավառում մշտադիտարկման կայուն և անկախ ենթահամակարգերի ձևավորման, մշտադիտարկման գործընթացում շահառուների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման, մշտադիտարկման արդյունքների հիման վրա պատասխանատվության և խրախուսանքի կառուցակարգերի գործարկման միջոցով,
- Աջակցել որոշումների կայացման, իրականացման և վերահսկման գործընթացում քաղաքացիական հասարակության՝ լիարժեք և արդյունավետ մասնակցություն ապահովող անհրաժեշտ և վերաբերելի կարողությունների զարգացմանը:

1.2 Առաջադրանքի նպատակը

Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունն ապահովող հիմնական տարրերից մեկը հակակոռուպցիոն պայքարի միջոցների և կառուցակարգերի մասին հասարակության պատշաճ իրազեկումն է: Այդուհանդերձ, այս բնագավառում մինչ օրս պետական մակարդակով էական քայլեր չեն ձեռնարկվել, հասարակությունը լիարժեք չի ընդգրկվել կոռուպցիայի դեմ տարվող պայքարին և օբյեկտիվորեն զրկված է եղել այդ գործընթացի վրա ներազդելու հնարավորությունից: Հակակոռուպցիոն պայքարի միջոցների ու կառուցակարգերի վերաբերյալ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու և հանրային կրթությունն ապահովելու համար անհրաժեշտ է.

- Կոռուպցիայի վիճակի և դրա դեմ պայքարի արդյունավետության մասին ներկայացնել պարբերական հաշվետվություններ,
- Հանձնախմբի և պատասխանատու մարմինների կողմից քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ պատրաստել և հրապակել տեղեկատվական նյութեր, ուղեցույցներ,
- Կազմակերպել պարբերական միջոցառումներ (այդ թվում՝ առցանց քննարկումներ, մրցույթներ և այլն):

Տվյալների հանրամատչելիության ապահովման և առցանց հարթակի (այսուհետ՝ **առցանց հարթակ**) ստեղծումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացման

համար, ինչպես նաև պետական լիազորված մարմինների գործունեության վերաբերյալ հանրության պատշաճ իրազեկման:

2. Առաջադրանքի նկարագրություն

Առցանց հարթակի համակարգը պետք է բաղկացած լինի կայքից և բովանդակության կառավարման համակարգից, որոնք պետք է համապատասխանեն ստորև ներկայացված տեխնիկական պահանջներին:

Կայքի Տեխնիկական պահանջները

- Կայքը պետք է նախատեսված լինի համակարգչով, բջջային հեռախոսով, պլանշետներով և այլ,
- Կայքն ինչպես տեխնիկական, այնպես էլ բովանդակային տեսանկյունից օգտագործման համար պետք է լինի հարմարավետ (User friendly),
- Կայքը պետք է նախատեսված լինի միալեզու (հայերեն) բովանդակություն ցուցադրելու համար,
- Հանրության մասնակցությունը ապահովելու համար կայքում պետք է նախատեսված լինի տեղադրված նյութերի վերաբերյալ կարծիք թողնելու հնարավորություն, որը կայքում հայտնվելուց առաջ պետք է հաստատվի մոդերատորների կողմից,
- Կայքում պետք է լինի մշտադիտարկման գործիք, որն այցելուներին եւ շահագրգիռ անձանց կցուցադրի, թե՛ թիրախային գերատեսչություններն ինչպես են իրականացնում հաստատված գործողությունների ծրագրերը փորձագետների կողմից մշակված և հաստատման արժանացած ինդիկատորների համաձայն: Յուրաքանչյուր ինդիկատորի համար կնախատեսվի կատարման աստիճանը (որքան մասով է կատարված) եւ գնահատականը մուտքագրելու եւ խմբագրելու գործիքներ:
- Կայքը հնարավորություն կունենա մուտքագրել կատարողականներ, գնահատականներ եւ այլն: Եթե նույնիսկ գործարկման պահին գնահատականներ չլինեն դրանք կարող են ավելացվել հետագայում, երբ հստակ որոշվի կատարողականի գնահատման համակարգը:
- Կայքում զետեղված նյութերը պետք է ունենան ներբեռնելու և տպելու հնարավորություն, ինչպես նաև նախատեսված լինեն սոցիալական կայքերի միջոցով տարածելու համար (Facebook, Twitter, Google+),
- Կայքը պետք է գրանցվելու հնարավորություն տրամադրի օգտատերերին՝ կայքում տեղադրվող նոր նյութերի թարմացումներին բաժանորդագրվելու և

պետական լիազորված մարմիններին հարցադրումներ ներկայացնելու և պատասխաններ ստանալու համար,

- Օգտատերերի կողմից ուղարկված հարցադրումները կայքի միջոցով պետք է հայտնվեն համապատասխան պետական լիազորված մարմինների փաստաթղթաշրջանառության համակարգերում և հակառակը պետական լիազորված մարմինների կողմից ուղարկված պատասխանները պետք է հայտնվեն օգտատերերի անձնական կաբինետում,
- Վիճակագրություն վարելու և վերահսկման նպատակով լիազոր մարմիններին ուղղված հարցադրումների և նրանց պատասխանների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է դիտելու համար հասանելի լինի նաև մոդեռատորներին,
- Կայքը պետք է թարմացվի անընդհատ՝ ամեն օր, անհրաժեշտության դեպքում՝ օրը մի քանի անգամ,
- Կայքը պետք է ունենա առանձին ենթաբաժին, որտեղ օգտատերերը հնարավորություն կունենան տեսնելու պետական և հակակոռուպցիոն գործառույթներով օժտված մարմինների, ինչպես նաև հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կայքերի հղումները և թեժ գծերի մասին տեղեկատվություններ,
- Կայքը պետք է կառուցված լինի այնպիսի ծրագրային պլատֆորմի վրա, որ կայքի հետագա կառուցվածքային որոշ փոփոխությունների կատարումը դյուրին լինի,
- Ֆունկցիոնալ տեսանկյունից կայքը պետք է պատրաստված լինի ճկուն, և հնարավորություն լինի դրա օգտագործման ընթացքում ստեղծել նոր բաժիններ, ենթաբաժիններ: Օրինակ՝ ներկայումս ՀՀ 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը ընդգրկում է 4 ոլորտ, իսկ հետագայում այդ ոլորտների փոփոխման կամ ավելացման արդյունքում կարիք կլինեն կայքում կատարել նոր ավելացումներ,
- Կայքը պետք է ունենա բովանդակության կառավարման համակարգ, որի միջոցով համակարգի ադմինիստրատորը/մոդերատորը կկարողանա կառավարել կայքի աշխատանքային գործընթացները և խմբագրել բովանդակությունները,
- Կայքում նոր հրապարակումներ տեղադրելուց ադմինիստրատորը կարող է կայքում հրապարակման հետ մեկտեղ նյութը հրապարակել նաև հանրության կողմից լայն կիրառվող սոցիալական և բլոգերային կայքերում հարթակի պաշտոնական էջերում (Facebook, Twitter, Youtube և այլն),
- Կայքի գրանցված օգտատերերը պետք է ունենան անձնական կաբինետ, որի միջոցով կկարողանան տեսնել իրենց կողմից թողնված կարծիքները՝ համապատասխան մեկնաբանություններով: Նաև կայքը պետք է

հնարավորություն ընձեռի օգտատերերին իրենց անձնական կաբինետում ստանալ պատասխաններ պետական լիազորված մարմիններից,

- Կայքի ադմինիստրատորը կարող է կայքում ավելացնել լրացուցիչ բաժիններ կամ նյութեր:

Կայքը պետք է պարունակի հետևյալ բովանդակային տեղեկությունները

- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը, ներառյալ համառոտ ակնարկ նախկին հակակոռուպցիոն ռազմավարություններին: Բաժնում օգտագործվող բոլոր հղումները պետք է լինեն ակտիվ (հիպեր հղում),
- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրից բխող գործողությունները, միջոցառումները,
- Պետության կողմից հասարակական տարբեր ոլորտներում իրականացվող և իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվություն,
- Հակակոռուպցիոն բարեփոխումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն,
- Պատկան մարմինների իրենց ոլորտներում առկա կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի և արդյունքների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ հանրության կողմից գնահատելու հնարավորության առկայությամբ,
- Հակակոռուպցիոն այլ միջոցառումների մասին տեղեկատվություն,
- Հակակոռուպցիոն բնույթի լուրեր,
- Հակակոռուպցիոն բնույթի կրթական ծրագրեր,
- Հակակոռուպցիոն արշավներին աջակցելու նպատակով ջատագովության նյութեր՝ տարբեր լեզուներով,
- Հեշտությամբ և անվճար հիմունքներով կազմակերպել առցանց հակակոռուպցիոն վերապատրաստման դասընթացներ, և դրանց նյութերը տեղադրել Կայքի էլեկտրոնային գրադարան բաժնում,
- Լիազորված պետական մարմիններին ուղղված հարցումների ընթացքի և քանակի վերաբերյալ ամփոփ և ընդլայնված վիճակագրություն՝ կայքի 1-ին էջում և բովանդակության կառավարման բաժնում:

3. Ակնկալվող արդյունքներ

Առաջադրանքի արդյունքը կլինի մի համակարգ, որը հնարավոր կդարձնի հասարակության պատշաճ իրազեկումն հակակոռուպցիոն պետական լիազորված մարմինների գործունեության վերաբերյալ, պայքարի միջոցների ու կառուցակարգերի վերաբերյալ: Համակարգը կապահովի կայուն կապի ձևավորում, շարունակական երկխոսություն քաղաքացիական հասարակության և իշխանության մարմինների ու հանրային ինստիտուտների միջև: Առաջադրանքի ավարտից հետո արդեն հնարավոր կլինի օգտվել էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) առանձին գործիքներից, այդ թվում՝ էլեկտրոնային սոցիոլոգիական հարցումներից, էլեկտրոնային քվեարկություններից, նոր առաջարկությունների հավաքման և այլ մեթոդներից:

4. Աշխատանքների իրականացման ժամանակացույց

Համակարգի մշակումն եւ ներդրումը կիրականացվի հետևյալ փուլերով 2 ամսվա ընթացքում.

Փուլ 1. Մեկնարկային շրջան (1 ամիս)

- Հանդիպել ՀՀ պետական լիազորված մարմինների հետ, որոշել կոնտակտային անձանց և վերջիններիս հետ համատեղ որոշել ներգրավվող պետական կառավարման մարմինների ցանկն ու կապ հաստատել համապատասխան պաշտոնյաների հետ,
- Պատվիրատուին ներկայացնել կայքի արտաքին ձևավորման առնվազն 2 տարբերակ և պատվիրատուի հետ համաձայնեցնել վերջնական տարբերակը,
- Պատվիրատուին ներկայացնել կայքի քարտեզը (site map), որը կնկարագրի կայքի կառուցվածքը բաժինների հիերարխիկ դասավորությունն եւ յուրաքանչյուր էջի կառուցվածքը,
- Պարզել հիմնական գործողությունները, տվյալների և գործարքների ծավալը և այլն,
- Հաստատել առաջադրանքի տեսլականը և նպատակները պատվիրատուի հետ,
- Մշակել պահանջների մասնագիր առաջարկվող լուծման օպտիմալ և անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ համապատասխան սարքավորումների վերաբերյալ,
- Ներկայացնել նախնական հաշվետվություն, որն ի թիվս աշխատանքի այլ նկարագրությունների կներառի ներդրվող համակարգի համար պահանջվող

սարքավորումների մասնագրերն ու շահագործման պայմանների նկարագրությունը:

Փուլ 2. Համակարգի ստեղծում (1 ամիս)

- Համակարգի նախագծում, ծրագրավորում եւ ներդրում,
- Տվյալների փոխանակման ենթահամակարգի ներդրում՝ ըստ տեխնիկական առաջադրանքի պահանջների,
- Նոր համակարգի ամբողջական գործարկում,
- Գնահատել ուսուցումների պլանը և ուրվագծել օգտվողների տարբեր խմբերի համար նախատեսված ուսումնական ծրագրերը,
- Տվյալ փուլի վերաբերյալ հաշվետվության ներկայացում:

Փուլ 3. Առաջադրանքի հանձնում (1 ամիս)

- Կայքի շահագործման վերաբերյալ փաստաթղթերի մշակում,
- Օգտվողի ձեռնարկի մշակում,
- Համակարգի փոխանցում պատվիրատուին,
- Ծրագրային ապահովման արտոնագրային համաձայնագրի տրամադրում,
- Պատվիրատուի և Խորհրդատուի միջև երաշխիքային սպասարկման համաձայնագրի ստորագրում,
- Գիտելիքների փոխանցում և վերապատրաստում նշանակված աշխատակիցներին,
- Ավարտական հաշվետվության ներկայացում:

Փուլ 3-ին կհետևի 36 ամսյա երաշխիքային սպասարկման ժամկետը, որը կներառի համակարգի շահագործման ընթացքում ի հայտ եկած սխալների ուղղումը և բոլոր խնդիրների կարգավորումը:

Ակնկալվում է, որ յուրաքանչյուր փուլի իրականացումը կմեկնարկի նախորդ փուլի հաջող ավարտից հետո: Այնուամենայնիվ, Խորհրդատուն կարող է, հնարավորության դեպքում նախաձեռնել ծառայություններ մի քանի փուլերում զուգահեռաբար՝ օր., ուսուցման ծրագիրը կարող է նախաձեռնվել և իրականացվել առաջադրանքի իրականացմանը զուգահեռ:

5. Խորհրդատուների որակավորում

Խորհրդատուի որակավորումները և փորձը պետք է համապատասխանեն ստորև ներկայացված նվազագույն պահանջներին.

- Կայքը պատրաստող ընկերությունը պետք է ունենա 3 տարվա աշխատանքային փորձ և 5 աշխատողից ոչ պակաս աշխատակազմ,
- Կայքը պատրաստող Ընկերությունը պարտավոր է սպասարկել կայքը դրա գործարկումից հետո 3 տարի,
- Կայքը պետք է պատրաստվի ընկերության կողմից պայմանագիրը կնքելուց հետո 2 ամսվա ընթացքում,
- Ընկերությունը պետք է ներկայացնի պատրաստված համանման կայքերի առցանց հղումներ:

6. Այլ պայմաններ

Հեղինակային իրավունք	
	Խորհրդատուն պետք է հանձնի ամբողջական սկզբնաղբյուրի կոդը Համակարգի հաջող ներդրման հաշվետվության ներկայացման ժամանակ:
Ծրագրային ապահովման արտոնագրային համաձայնագիր	
	Խորհրդատուն պետք է տրամադրի առաջարկվող լուծման համար պահանջվող բոլոր արտոնագրերը:

7. Մտավոր սեփականություն

Մտավորական սեփականության իրավունքները բոլոր ստանդարտ ծրագրային ապահովումների և նյութերի համար պետք է մնան նման իրավունքների տերերի տիրույթում: Ստանդարտ ծրագրային ապահովումը վերաբերվում է բոլոր պատրաստի ծրագրային ապահովումներին, որոնք տրամադրվում են որպես Խորհրդատուի կողմից առաջարկվող ծառայությունների մաս:

Պատվիրատուն համաձայնվում է սահմանափակել Ստանդարտ ծրագրային ապահովման և Ստանդարտ նյութերի օգտագործումը, պատճենումը կամ վերարտադրումը՝ բացառությամբ այն իրավիճակի, երբ Պատվիրատուն կարող է Ստանդարտ նյութերի լրացուցիչ պատճեններ անել՝ դրանք օգտագործելու համար այն առաջադրանքի շրջանակներում, որի մաս է կազմում Համակարգը այն դեպքում, եթե այդ Ստանդարտ նյութերի վերաբերյալ պահանջ ստանալուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում Խորհրդատուն չներկայացնի դրանց պատճենները:

Ստանդարտ ծրագրային ապահովման կամ դրա տարրերի օգտագործման Պատվիրատուի իրավունքները չեն կարող տրամադրվել, արտոնագրվել կամ այլ կերպ կամավոր փոխանցվել, բացառությամբ համաձայն համապատասխան արտոնագրային համաձայնագրի:

Համակարգի համար հատուկ մշակված ծրագրային ապահովման և նյութերի մասով գործում է հետևյալը.

- Խորհրդատուն Պատվիրատուին տրամադրում է հատուկ մշակված ծրագրային ապահովման և նյութերի մշտական, անվերադարձ արտոնագիր, որը վավեր է Պատվիրատուի, դրա ենթակա կազմակերպչական միավորների և իրավահաջորդների կողմից օգտագործման համար,
- Այս արտոնագիրը պետք է Պատվիրատուին իրավունք տա փոփոխել, ընդարձակել, կրկնօրինակել և պատրաստել ածանցյալ ծրագրային ապահովում կամ նյութեր Պատվիրատուի սովորական գործունեության ընթացքում Պատվիրատուի, դրա ենթակա կազմակերպչական միավորների և իրավահաջորդների կողմից օգտագործման համար,
- Այս արտոնագիրը պետք է Պատվիրատուին իրավունք տա բացել և փոխանցել հասկացությունները, գրվածքները, նախագծերն, ալգորիթմերը, ծրագրավորման փաստաթղթերը և հատուկ մշակված այլ փաստաթղթերը ցանկացած երրորդ կողմի, որի հետ Պատվիրատուն պայմանագիր կկնքի տեխնիկական օժանդակության ծառայությունների մատուցման կամ համակարգի լրացուցիչ գործառույթների մշակման համար՝ պայմանով, որ Պատվիրատուն նման երրորդ կողմից կստանա իրավաբանորեն պարտադրող, գրավոր պարտավորություն առ այն, որ երրորդ կողմը առևտրականացնի բխող արդյունքները և չի փոխանցի նման հասկացությունները, գրվածքները, նախագծերն, ալգորիթմերը, ծրագրավորման փաստաթղթերը և հատուկ մշակված այլ փաստաթղթերը Խորհրդատուից բացի մեկ այլ կողմի առանց Խորհրդատուի գրավոր հավանության,
- Փուլ 3-ը ընդունելուց հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում Խորհրդատուն Պատվիրատուին է հանձնում հատուկ մշակված ամբողջ ծրագրային ապահովման սկզբնաղբյուրի կոդերը և հատուկ մշակված ծրագրային ապահովման հետ կապված

բոլոր համապատասխան փաստաթղթերը: Խորհրդատուն Պատվիրատուին ներկայացնում և երաշխավորում է, որ.

- Պատվիրատուին տրամադրված հարմարեցված մասի սկզբնաղբյուրի կողը և համապատասխան փաստաթղթերն ամբողջական, ճիշտ և վերջին օրինակներն են, որոնք ամբողջությամբ համապատասխանում են Փուլ 3-ի Ընդունման պահին գործող ծրագրային ապահովման թողարկման տարբերակին,
- 36 ամիս տևողությամբ երաշխիքային ժամկետի ընթացքում թողարկման օրինակում որևէ փոփոխություններ կատարելուց հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում Խորհրդատուն Պատվիրատուին կտրամադրի սկզբնաղբյուրի կողը և համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես կլինեն ամբողջական, ճիշտ և արդիական և կհամապատասխանեն ընթացիկ թողարկված տարբերակին,
- Սկզբնաղբյուրի կողը պետք է մարդու համար ընթեռնելի ձևով պարունակի բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են բավական հմուտ ծրագրավորողին կամ վերլուծաբանին հատուկ մշակված ծրագրային ապահովման սպասարկման և/կամ կատարելագործման հնարավորություն տալու համար, և որ չբացառելով վերոհիշյալը սկզբնաղբյուրի կողը և համապատասխան փաստաթղթերը կպարունակեն ծրագրավորողների մեկնաբանությունների, տվյալների և գործընթացների մոդելների, տրամաբանական ձեռնարկների և բլոկ-սխեմաների բոլոր ցանկերը:

Բացի Պատվիրատուին ծրագրային ապահովման հետ պատկանող մտավոր սեփականության իրավունքներից, սույնով Խորհրդատուն Պատվիրատուին տրամադրում է ծրագրային ապահովման հասանելիության և օգտագործման արտոնագիր, ներառյալ բոլոր գյուտերը, նախագծերը և ծրագրային ապահովման մեջ պարունակվող նշանները:

Ծրագրային ապահովման հասանելիության և օգտագործման նման արտոնագիրը պետք է.

ա) լինի.

- ոչ բացառիկ,
- ամբողջությամբ վճարված և անվերադարձ,
- վավերական Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, և

բ) իրավունք տա, որպեսզի ծրագրային ապահովումը.

- օգտագործվի կամ կրկնօրինակվի նույն հզորությունն ունեցող համակարգիչների վրա կամ դրանց հետ (որոնց համար այն ձեռք է բերվել և պահուստային համակարգիչները), եթե հիմնական(ներ)ը չի(չեն) աշխատում և խելամիտ անցումային շրջանում, երբ օգտագործումը փոխանցվում է հիմնականից պահուստային,
- օգտագործվի կամ կրկնօրինակվի փոխարինող համակարգիչների վրա օգտագործման համար, իսկ օգտագործումը սկզբնական և փոխարինող

համակարգիչների վրա կարող է իրականացվել միաժամանակ՝ խելամիտ անցումային ժամանակահատվածում,

- եթե Համակարգի բնույթը թույլ տա նման հասանելիություն, այն հասանելի լինի առաջնային և/կամ պահեստային համակարգիչներին միացված մյուս համակարգիչներից՝ տեղական կամ լայնաշերտ ցանցի կամ նմանատիպ լուծումների միջոցով և օգտագործվի կամ օգտագործման համար կրկնօրինակվի այդ մյուս համակարգիչների վրա՝ նման հասանելիության համար անհրաժեշտ ծավալով,
- վերարտադրվի ապահովության կամ պահպանման նպատակներով,
- հարմարեցվի, ադապտացվի կամ համատեղվի այլ համակարգչային ծրագրի հետ՝ Պատվիրատուի կողմից օգտագործման նպատակով, հաշվի առնելով որ սահմանափակումներ ունեցող հանձնված ծրագրային ապահովման որևէ նշանակալի մաս պարունակող ածանցյալ ծրագրային ապահովումը պետք է ենթակա լինի նույն սահմանափակումներին, որոնք ներկայացված են սույն պայմանագրում,
- ներկայացվի սպասարկման ծառայություններ մատուցողներին և նրանց ենթակապալառուներին և կրկնօրինակվի նրանց կողմից օգտագործման համար (և Պատվիրատուն կարող է ենթարտոնագրել նման անձանց Ծրագրային ապահովումն օգտագործելու և օգտագործման նպատակով կրկնօրինակելու համար) ըստ նրանց սպասարկման ծառայությունների պայմանագրերի իրականացման համար անհրաժեշտ ծավալի՝ համաձայն սույն պայմանագրում սահմանված նույն սահմանափակումների:

8. Պատասխանատվությունը թերությունների համար

Խորհրդատուն երաշխավորում է, որ Համակարգը, այդ թվում ամբողջ ծրագրային ապահովումը և մատուցվող Ծառայությունները զերծ կլինեն նախագծման, մշակման, նյութերի և արտադրման որակի հետ կապված որևէ թերություններից, որոնք կհանդիսանան համակարգի և/կամ դրա որևէ բաղադրիչի՝ տեխնիկական պահանջներին չհամապատասխանելու պատճառ կամ էապես կսահմանափակեն համակարգի և/կամ ենթահամակարգերի աշխատանքային գործառույթները, հուսալիությունը կամ գործառնությունների ընդլայնման հնարավորությունները:

- Խորհրդատուն նաև երաշխավորում է, որ Համակարգի ներքո մատակարարվող տեխնոլոգիաները նոր են, օգտագործված չեն և ներառում են բոլոր վերջին նախագծային բարելավումները, որոնք էականորեն ազդեցություն ունեն պահանջները կատարելու համակարգի կարողության վրա,
- Երաշխիքային ժամկետը սկսում է Փուլ 3-ի ընդունման ամսաթվից և տևում է 36 ամիս:

- Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում Խորհրդատու կողմից մատակարարված Համակարգում կամ մատուցված Ծառայություններում ի հայտ գան որևէ նախագծային, ճարտարապետական կամ մասնագիտական թերություններ, Խորհրդատուն պետք է պատշաճ կերպ՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, թերությունների պատշաճ լուծումը Պատվիրատուի հետ քննարկելով և համաձայնեցնելով միայն իր հաշվին, վերանորոգի, փոխարինի կամ այլ կերպ վերացնի այդ թերությունն, ինչպես նաև նման թերության կողմից Համակարգին հասցված վնասը,
- Խորհրդատուն պատասխանատու չէ Համակարգի այնպիսի թերության կամ դրան հասցված այնպիսի վնասի վերանորոգման, փոխարինման կամ վերացման համար, որոնք բխում են հետևյալ պատճառներից.
 - Պատվիրատուի կողմից Համակարգի ոչ պատշաճ շահագործում կամ սպասարկում,
 - նորմալ մաշվածություն,
 - Համակարգի օգտագործում այնպիսի տարրերի հետ, որոնք չեն մատակարարվել Խորհրդատուի կողմից կամ
 - Պատվիրատուն կամ երրորդ կողմը Համակարգում կատարել են Խորհրդատուի հավանությունը չստացած փոփոխություններ:
- Նման թերությունների հայտնաբերումից հետո Պատվիրատուն Խորհրդատուին պատշաճ կձանուցի՝ նշելով որևէ նման թերության բնույթը բոլոր հասանելի տեղեկությունների հետ մեկտեղ: Պատվիրատուն պետք է Խորհրդատուին ընձեռի բոլոր խելամիտ հնարավորությունները որևէ նման թերության զննման համար, Պատվիրատուն պետք է Խորհրդատուին նաև ընձեռի համակարգի և տեղամաս(եր)ի ամբողջ անհրաժեշտ հասանելիությունը, որպեսզի Խորհրդատուին հնարավորություն տա իրականացնել թերության(ունների) վերացման իր պարտավորությունները,
- Եթե Համակարգը հնարավոր չէ օգտագործել նման թերության կամ նման թերության վերացման հետևանքով, ապա երաշխիքային ժամկետը երկարացվում է նման թերության կամ նման թերության վերացման հետևանքով Պատվիրատուի կողմից Համակարգի օգտագործման անհնարինության ժամկետին հավասար ժամկետով:

Պատվիրատուի պահանջով և անկախ սույն Պայմանագրի ներքո Խորհրդատուի նկատմամբ Պատվիրատուի բոլոր մնացած իրավունքներից և միջոցներից, Խորհրդատուն Պատվիրատուին կառաջարկի ամբողջ հնարավոր աջակցությունը Համակարգում ներառված ծրագրային ապահովման երրորդ կողմ հանդիսացող ենթակապալառու արտադրողից կամ լիցենզատուից երաշխիքային ծառայություններ կամ ուղղման գործողություններ ստանալու համար, ներառյալ նման արտադրողների կամ

լիցենզատուների կողմից Խորհրդատուին տրված որևէ երաշխիքների իրավունքի վերագրումը կամ փոխանցումը Պատվիրատուին՝ առանց սահմանափակումների:

9. Մտավոր սեփականության իրավունքների երաշխիք

Սույնով Խորհրդատուին ներկայացնում և երաշխավորում է, որ.

- Մատակարարված, տեղակայված, փորձարկված և ընդունված Համակարգը,
- Համակարգի օգտագործումը համաձայն սույն պայմանագրի և

համաձայն Պայմանագրի Պատվիրատուին տրամադրված Ծրագրային ապահովման և Նյութերի կրկնօրինակումը չեն խախտում և չեն խախտի որևէ երրորդ կողմից Մտավոր սեփականության իրավունքը և այն ունի բոլոր անհրաժեշտ իրավունքները կամ միայն իր հաշվին գրավոր կապահովի իրավունքների բոլոր փոխանցումները և համաձայնությունները, որոնք անհրաժեշտ են վերագրման, արտոնագրերի և Մտավոր սեփականության իրավունքի և Պայմանագրում նշված երաշխիքների այլ փոխանցումների, և համաձայն Պայմանագրի Պատվիրատուի կողմից բոլոր Մտավոր սեփականության իրավունքների տիրապետման կամ իրացման համար: Խորհրդատվության առանց որևէ սահմանափակումների կապահովի բոլոր անհրաժեշտ գրավոր համաձայնագրերը, համաձայնությունները և իրավունքների փոխանցումն իր աշխատակիցներից և այլ անձանցից կամ հաստատություններից, որոնց ծառայություններն օգտագործվել են համակարգի մշակման համար: